ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

ԵՄ-ն բիզնեսի համար՝ Տեղական արժույթով գործընկերության ԵՄ նախաձեռնություն. Հարավարևելյան Եվրոպայի եվրոպական հիմնադրամ (ՀԵԵՀ)

Իրականացման ժամանակահատված: 20.12.2018 - 20.06.2039

ԱլԳ երկրներ:

Ադրբեջան, Բելառուս, Հայաստան, Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան

ԵՄ ներդրում: € 50 320 000

Ընդհանուր բյուջե: € 50 320 000

Իրականացնող կազմակերպություն(ներ):

KfW

Սոցիալական ցանցերում օգտահաշիվների հղումներ: facebook.com/EFSEfund/, https://twitter.com/efsefund, youtube.com/channel/UC-RwaJDIqK544bA90wmtpHg,

Նախագծի կայքէջ: efse.lu

Նախագծի նկարագրություն:

Հիմնադրամը նպատակ ունի խթանել տնտեսական զարգացումն ու բարգավաճումը՝ տեղական որակավորված ֆինանսական հաստատությունների միջոցով զարգացման լրացուցիչ ֆինանսներ ապահովելով հատկապես միկրո և փոքր ձեռնարկությունների (ՄՓՁ), ինչպես նաև մասնավոր տնային տնտեսությունների համար:

ՀԵԵՀ-ի նպատակն է զարգացնել տեղական ֆինանսական շուկաները՝ հետևելով կայուն և շուկայական սկզբունքներին, սահմանել վարկավորման չափանիշներ, նվազեցնել միջնաժամկետ և երկարաժամկետ ֆինանսավորման պակասը և ներդնել պատասխանատու ֆինանսավորման կանոններ: Արևելյան գործընկերության երկրներում Հիմնադրամը ֆինանսավորել է վերջնական վարկառուների համար միջինում մոտ 10 000 եվրոյի չափով ենթավարկեր: Ակնկալվում է, որ սա շարունակական կլինի: Նախատեսվում է, որ Հիմնադրամը ֆինանսական աջակցություն կցուցաբերի հավելյալ 74,000 ՓՄՁ-ների կամ մասնավոր տնային տնտեսությունների՝ մինչև 2037 թվականը իր ստեղծումից ի վեր սեփական շահառուների թիվն Արևելյան գործընկերության երկրներում հասցնելով շուրջ 250 հազարի: Հիմնադրամը նախատեսում է լրացուցիչ 1 միլիարդ եվրո ընդհանուր գումարի ենթավարկեր հատկացնել Արևելյան գործընկերության երկրների ՓՄՁ-ներին կամ մասնավոր տնային տնտեսություններին: Թվային արտահայտմամբ ակնհայտորեն գերակշռող կլինի միկրո վարկերի տեսակարար կշիռը:

Ակնկալվող արդյունքներ:

Գործողությունն ուղղված կլինի Արևելյան գործընկերության երկրների բիզնեսների համար հիմնական խոցելի ուղղությունների վերացմանը՝ հետևյալ կերպ.
- Տեղական արժույթով միջնաժամկետ վարկերի հասանելիության ապահովում թերսպասարկվող ՓՄՁ-ների և ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսությունների համար՝ առանց վերջիններիս արտարժութային ռիսկի ենթարկելու.
- Ֆինանսների հասանելիության և աշխատատեղերի կայունության/ստեղծման բարելավում.
- Տեղական բանկերի կողմից ՄՓՄՁ-ներին և ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսություններին վարկավորման ծավալների ավելացում՝ դրանով իսկ մշտապես բարելավելով նրանց հասանելիությունը ֆինանսներին
- Հանրային և մասնավոր կապիտալի ներգրավում (կատալիզացնող ազդեցություն).
- Տեղական ֆինանսական շուկայի ներառականության ամրապնդում: